

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՌՈՒՋԱՆՆԱ ՀԱՎՈՐՑԱՆ

Իրավաբանական պատասխանատվության համալիր ինստիտուտը, պատասխանատվության առանձին տեսակներով հանդերձ, իրավունքի ընդհանուր համակարգի օրգանական մասն է:

Մասնագիտական գրականության մեջ գերակշռող է հետևյալ մտեցումը. իրավաբանական պատասխանատվությունը պետական հարկադրանքի միջոց է, որը կիրառվում է իրավախախտ սուբյեկտի նկատմամբ¹: Ըստ ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի. «Իրավաբանական պատասխանատվությունը խախտված նորմի սանկցիայով նախատեսված և իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է»²:

Իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է սահմանադրական պատասխանատվությունը. այն կարելի է բնութագրել որպես սահմանադրաիրավական հարկադրանքի միջոց, որը կիրառվում է այն դեպքում, երբ սուբյեկտը փաստացի սահմանադրական իրավախախտում է կատարում: Իսկ երբ սուբյեկտը քաղաքական կամ այլ պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու ուժով ինքն է կամավորությամբ ստանձնում իր սահմանադրական պարտականությունների կատարման պատասխանատվությունը, ապա դրսևորվում է սահմանադրական պատասխանատվության ոչ թե նեգատիվ (հարկադրական), այլ պոզիտիվ (պրոսպեկտիվ՝ ապագայում, ժամանակի մեջ դրսևորվող, կամավոր) ձևը:

Այսինքն՝ կարող ենք սահմանել, որ սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն և առանձնահատուկ տեսակ է, որն ունի իրացման երկու ձև պոզիտիվ կամ կամավոր և նեգատիվ կամ հարկադրական:

Կամավոր ձևը սահմանադրական իրավանորմերի պահանջները պատշաճ կատարելն է, դրանք պահպանելը, որը դրսևորվում է սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավաչափ վարքագծում:

¹ Ст' u Липинский Д. А. Проблемы юридической ответственности, СПб., 2004, էջ 20-55:

² Վ. Ս. Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 285:

Կամավոր սահմանադրական պատասխանատվության հիմք է ծառայում սուբյեկտի կողմից սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակ ձեռք բերելը, օրինակ՝ պետության նախագահ, վարչապետ կամ օրենսդիր մարմնի անդամ ընտրվելը, նախարար կամ դատավոր նշանակվելը, երդում տալը և երդմամբ պաշտոն ստանձնելը, սահմանադրաիրավական նորմերի դրույթներին համապատասխան գործունեություն իրականացնելը և այլն:

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է. «Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և **պատասխանատվությանը** համապատասխանող վարձատրություն»: Հարց է ծագում՝ դատավորի ո՞ր պատասխանատվության մասին է խոսքը, եթե ոչ, նախ և առաջ, պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության: Ընդ որում, դատավորը արդարադատության անաչառ իրականացման պատասխանատվություն է ստանձնում երդմամբ: Որոշ երկրներում (Չեխիա, Իսրայել, Իռլանդիա, Մեքսիկա) դատավորների նեգատիվ սահմանադրական պատասխանատվության հիմքեր են համարվում երդում չտալը, վերապահումով երդվելը կամ երդումը չկատարելը, անհամատեղելիության մասին պահանջները խախտելը³:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես նաև սահմանադրական իրավանորմերում «ստանձնել» եզրույթը նշանակում է, որ իրավասու մարմինը կամ անձը կամավոր դառնում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 127-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հանրապետության նախագահը պաշտոնը **ստանձնում է** Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված երդմամբ, ընդ որում, պաշտոնի հետ միաժամանակ, նախագահը երդմամբ կամավոր ստանձնում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն՝ հետևելու Սահմանադրության պահպանմանը⁴: Այլ հարց է, թե Սահմանադրության պահպանմանը հետևելը ինչպես է մեկնաբանվում և կյանքի կոչվում: Կարծում ենք՝ օրախնդիր պահանջ է Հայաստանի Հանրապետության նախագահի համար Սահմանադրությանը հետևելու գործուն կառուցակարգեր սահմանելը:

ՀՀ նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, կառավարության անդամները, դատավորները, պաշտոնատար այլ անձինք, պատշաճ կատարելով իրենց սահմանադրական պարտականությունները, դրսևորում են պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ **սահմանադրական կամ այլ իրավախախտում կատարելու դեպքում վերաձվում են նեգատիվ սահմանադրական պատասխանատվության ենթակա սուբյեկտի:**

³ Տե՛ս «Конституционное право зарубежных стран», М., 1999:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ. Փոփոխություններով» // www.arlis.am

Այսինքն՝ սուբյեկտները ոչ թե ստանձնում են նեգատիվ (հարկադրական կամ ռետրոսպեկտիվ՝ հետահայաց) պատասխանատվություն, այլ դրան ենթարկվում են նախկինում կատարած արարքի համար, այն արարքի, որը սահմանադրական իրավախախտման կազմ է պարունակում: Սահմանադրական իրավախախտումներն ունեն հատուկ սուբյեկտներ, որոնք օժտված են սահմանադրական լիազորություններով և դելիկտունակությամբ: Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներն են՝ պետական իշխանության մարմինները, պաշտոնատար անձինք, համայնքային իշխանության ինստիտուտները, հասարակական-քաղաքական կառույցները, որոնք լիազորված են ընդունելու քաղաքացիների, հասարակության ու պետության համար կարևոր որոշումներ, ինչպես նաև սահմանադրական դելիկտունակությամբ օժտված ֆիզիկական ու իրավաբանական անձինք:

Օբյեկտիվ առումով սահմանադրական իրավախախտումը կարող է կատարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Անգործության օրինակներ են ամիսներ շարունակ պառլամենտի նիստ չգումարելը, նախագահ ընտրվելուց հետո երդում չտալը և այլն: Սահմանադրական իրավախախտումների՝ սահմանադրական պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ սահմանադրական իրավունքները չարաշահելու դեպքերում կիրառվում են առանձնահատուկ սանկցիաներ, որոնք բնորոշ չեն իրավաբանական պատասխանատվության ոչ մի այլ տեսակի:

Սահմանադրական պատասխանատվությունը բնութագրվում է ոչ միայն երկակի (դուալ՝ պոզիտիվ և նեգատիվ կամ կամավոր և հարկադիր) բնույթով, հատուկ սուբյեկտներով, միայն իրեն բնորոշ սանկցիաներով, այլև այն հանգամանքով, որ որպես հարկադրական սահմանադրական պատասխանատվության փաստական հիմք կարող են լինել ինչպես սահմանադրական, այնպես էլ իրավունքի այլ ճյուղերին պատկանող նորմերի խախտումները: Օրինակ՝ պետական դավաճանությունը, առանձնապես ծանր կամ ծանր այլ հանցագործությունները քրեական իրավախախտումներ են, իսկ Սահմանադրության կոպիտ խախտումը սահմանադրական իրավախախտում է, որոնց դեպքում պետության գլխի համար նախատեսված պատասխանատվությունը՝ պաշտոնակցությունը, սահմանադրաիրավական սանկցիա է, որին հաջորդում է քրեական պատասխանատվությունը: Այսինքն՝ հարկադրական սահմանադրական պատասխանատվության հիմք կարող են լինել և՛ սահմանադրական, և՛ այլ իրավախախտումները: Միաժամանակ, հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության այլ (քրեական, վարչական) միջոցների հետ միասին: Սահմանադրական պատասխանատվությունը մի դեպքում կարող է նախորդել պատասխանատվության մյուս տեսակներին (քրեական, վարչական), օրինակ՝ անձին սահ-

մանված կարգով անձեռնմխելիության իրավունքից զրկելը, ապա՝ քրեական պատասխանատվության ենթարկելը, իսկ ուրիշ դեպքում կարող է կիրառվել իրավունքի այլ ճյուղերով նախատեսված ներգործության միջոցների (օրինակ՝ քրեադատավարական) գործադրումից հետո: Դրա օրինակը հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին ազատությունից զրկելն է, որից հետո օրենսդիր մարմինը կարող է նրան սահմանված կարգով զրկել պատգամավորական անձեռնմխելիության իրավունքից⁵:

Հարկադրական սահմանադրական պատասխանատվության միջոցներ են՝ պետության գլխին պաշտոնանկ անելը, օրենսդիր մարմինն արձակելը, կառավարությանը, վարչապետին կամ կառավարության անդամին անվստահություն հայտնելը, սահմանադրական պաշտոն զբաղեցնող անձին հետ կանչելը, լիազորություններից զրկելը և այլն: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի խմբակցության առաջարկությամբ, հարցապնդման պատասխանի քննարկման արդյունքով, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է ներկայացվել վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ: Միաժամանակ, հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը կարող է առաջարկել վարչապետին քննարկել կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը:

Պաշտոնանկությունը (պաշտոնից զրկելը, անվստահություն հայտնելը) պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող սահմանադրաիրավական խիստ սանկցիա է, որը կարող է իրականացվել իմպիչմենտի կարգով: Օրինակ, ԱՄՆ-ի Սահմանադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նախագահը, փոխնախագահը և Միացյալ Նահանգների բոլոր քաղաքացիական պաշտոնատար անձինք կարող են իմպիչմենտի կարգով պաշտոնից զրկվել, եթե մեղավոր են ճանաչվել պետական դավաճանության, կաշառակերության կամ այլ ծանր հանցագործությունների և իրավախախտումների համար»⁶:

Տարբեր պետություններում նախատեսված են պաշտոնանկության տարբեր ձևեր, օրինակ՝ պաշտոնատար անձի հետկանչ նրան նշանակած կամ ընտրած սուբյեկտի կողմից կամ պաշտոնական լիազորություններից զրկում դատական կարգով: Շատ պետություններում սահմանադրորեն նախատեսվում է, որ նախքան իր լիազորությունների իրականացմանն անցնելը երկրի նախագահը պարտավոր է երդվել: Երդումից խուսափելը կամ վերապահումով երդվելը կարող է հանգեցնել նախագահի նեգատիվ սահմանադրական պատասխանատվո-

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 96-րդ հոդվածի 2-րդ մաս:

⁶ **Զ. Մ. Խաչատրյան**, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, Եր., 1991, էջ 110; տե՛ս նաև «Соединенные Штаты Америки: Конституция и законодательные акты», М., 1993:

յան: Օրինակ՝ ըստ Չեխիայի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի՝ նախագահի ընտրությունն անվավեր է ճանաչվում, եթե նա հրաժարվում է երդվելուց կամ երդվում է վերապահումով: Տեսականորեն չի բացառվում նախագահի ինագուրացիա՝ երդման արարողությունն և երդմամբ պաշտոնի ստանձնում, ապա երդման խախտում: Այդ պատճառով որոշ պետություններում (Լիտվայում, Տաջիկստանում և այլն) սահմանադրորեն նախատեսվում է, որ նախագահի պաշտոնանկության հիմքերից մեկը երդմնագանցությունն է⁷: Նախագահը երդմամբ ստանձնում է պետության և ժողովրդի համար ամենակարևոր արժեքների պահպանության թե՛ բարոյական և թե՛ պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ եթե խախտում է Սահմանադրությունը, հավատարիմ չի մնում իր երդմանը, կատարում է պետական դավաճանություն կամ այլ ծանր հանցագործություն, ապա ոչ միայն կորցնում է քաղաքացիների վստահությունը, այլև ենթակա է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության:

Տարբեր երկրներում նախատեսված են նախագահի հարկադրական սահմանադրական պատասխանատվության հետևյալ հիմքերը.

- Սահմանադրությունը և (կամ) օրենքները խախտելը⁸,
- պետության սահմանադրական կարգի նկատմամբ ոտնձգությունը,
- սահմանադրական լիազորությունները չարաշահելը,
- սահմանադրական պարտականությունների չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
- պետական դավաճանություն կամ այլ ծանր հանցագործություն կատարելը,
- խորհրդարանի արձակման հանրաքվե նախաձեռնելը, եթե հանրաքվեի արդյունքով պառլամենտը չի արձակվում,
- երդումից հրաժարվելը, վերապահումով երդվելը կամ երդումը խախտելը,
- անհամատեղելիության մասին պահանջները խախտելը,
- նախագահի անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, նրա ոչ կոմպետենտ լինելը,
- երկրի տարածքը թողնելու համար անհրաժեշտ պայմանները խախտելը, երկրի տարածքն ինքնակամ լքելը և այլն⁹:

ՀՀ Սահմանադրության մեջ հարկ է լրացնել ՀՀ նախագահի պաշտոնանկության հիմքերը՝ 141-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսելով, որ «Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել

⁷ Տե՛ս «Новые Конституции стран СНГ и Балтии, Сборник документов», М., 1998:

⁸ 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը ՀՀ նախագահի պաշտոնանկության հիմքերի շարքում նախատեսել է Սահմանադրության կոպիտ խախտումը (141-րդ հոդվածի 1-ին մաս), որն այդպես էլ չի հստակեցվել:

⁹ Տե՛ս **Виноградов В. А.** Ответственность в механизме охраны конституционного строя, М., 2005, էջ 240-250:

պետական դավաճանության, այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ Մահմանադրության կոպիտ խախտման համար»: Այսինքն՝ առաջարկում ենք «պետական դավաճանությունից» հետո ավելացնել «առանձնապես ծանր այլ» բառակապակցությունը, այնուհետև ինչպես տեքստում, քանի որ, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի, պետական դավաճանությունը ոչ թե ծանր, այլ առանձնապես ծանր հանցագործություն է:

Նախագահի կամ հանրային իշխանության այլ սուբյեկտի սահմանադրական պատասխանատվության բնույթը բացարձակապես քաղաքական է և գրեթե միշտ ուղեկցվում է քաղաքական պատասխանատվությամբ:

Մահմանադրական պատասխանատվությունը սերտորեն կապված է սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության ինստիտուտների հետ:

1995 թվականին ընդունված Մահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց սահմանադրական արդարադատության և վերահսկողության համակարգը, սակայն չամրագրվեց սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը: Այն չնախատեսվեց նաև 2005, ապա 2015 թվականների սահմանադրական փոփոխություններում, թեպետ վերջինիս բարեփոխումների հայեցակարգում նախատեսված էր դա: «Մահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» գիտագործնական հետազոտությունում նշվում է. «Իրավական պետությունում պետք է բացառվի քաղաքական, տնտեսական և վարչական ներուժի սերտաճումը, երաշխավորված ու ապահովված պետք է լինի քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը, ... պետք է կարևորվեն իշխանության քաղաքական ու հանրային վարքագծի սահմանադրականացումը, ... իրավունքի գերակայության սկզբունքը: Այս գերիխնդրի լուծմանը կծառայեն ոչ միայն արդեն իսկ ձևավորված սահմանադրական ինստիտուտների բարելավմանն ուղղված միջոցները, այլև միանգամայն նոր գաղափարախոսությամբ ներծծված ինստիտուտները: Մասնավորապես, նախատեսվում է ներդնել սահմանադրական պատասխանատվության նոր համակարգ»¹⁰: Հատկանշական է, որ ոչ միայն կարևորվել է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, այլև անդրադարձ է կատարվել դրա իրականացման կառուցակարգին. «Անիրաժեշտ է ներդնել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, որի պարագայում կերաշխավորվի պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունն իրենց ծրագրանպատակային գործունեության

¹⁰ «Մահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2015, էջ 31-32:

ու լիազորությունների իրականացման հարցում: Տվյալ դեպքում կարող են կիրառելի լինել ինչպես գործող արդարադատության ատյանները, այնպես էլ կարող է նախապատվությունը տրվել սահմանադրական մարմինների ներկայացուցիչներից կազմված ատյանի ձևավորմանը: Կարևորը տվյալ դեպքում այնպիսի իրավական լուծումներ առաջադրելն է, որի արդյունքում բացառվի անպատժելիության հենքով սահմանադրական խախտումների երևույթը»¹¹:

Նման տեսական հիմնավորումներից հետո սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը նախատեսվեց սահմանադրական փոփոխությունների նախագծի նախնական տարբերակում, սակայն այդպես էլ տեղ չգտավ ժողովրդի դատին ներկայացված և հանրաքվեով ընդունված վերջնական փոփոխություններում: Պատճառը, ենթադրում ենք, սահմանադրական իրավախախտման բացահայտման, նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման հիմքերի ու մեխանիզմների բարդությունն է:

Ի տարբերություն Հայաստանի՝ բազմաթիվ երկրներում ոչ միայն սահմանվում են սահմանադրական պատասխանատվության միջոցներ, այլև իրավական ակտերում գործածվում է «սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունը: Այսպես, Լեհաստանի Հանրապետության Սահմանադրությունը 198-րդ հոդվածում ամրագրում է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը և նախատեսում այն անձանց, որոնք «սահմանադրական պատասխանատվություն են կրում Սահմանադրության կամ օրենքի խախտման համար՝ կապված իրենց զբաղեցրած պաշտոնի կամ ծառայողական պարտականությունների կատարման հետ»¹²: Իսկ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնական օրենքը սահմանում է պատասխանատվություն Սահմանադրության խախտման համար, որը կիրառվում է Սահմանադրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից՝ օրենքով սահմանված կարգով¹³:

Իսկ ինչո՞ւ ենք կարևորում սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կայանալը Հայաստանի Հանրապետությունում. քանի որ օրենքների խախտումների համար համապատասխանաբար նախատեսված են քրեական, վարչական կամ իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներ, իսկ հիմնական օրենքի՝ Սահմանադրության խախտման համար պատասխանատվության առանձին ինստիտուտ նախատեսված չէ, ինչը համարում ենք անհասկանալի և

¹¹ Նույն տեղում, էջ 152:

¹² «Конституция Республики Польша» // Конституционное (государственное) право зарубежных стран, Т. 3, М., 1995:

¹³ Տե՛ս **Трощинский П. В.** Юридическая ответственность по законодательству КНР // Журнал российского права, 2000, № 4, էջ 148-149, 154:

անընդունելի: Մահմանադրական պատասխանատվության ինստիտուտը սահմանադրական իրավախախտումների կանխման և սահմանադրական օրինականության ապահովման լուրջ երաշխիք է: **Իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ լինելով հանդերձ՝ այն միաժամանակ սահմանադրաիրավական հատուկ ինստիտուտ է, սահմանադրական կարգի հիմունքների իրականացմանը նպաստող գործիք, իշխանության բաժանման, «գապումների ու հակակշիռների» կառուցակարգի անհրաժեշտ բաղադրիչ, ինչպես նաև սահմանադրական մարմինների իրավական կարգավիճակի տարր:** Ուստի սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կայացումը Հայաստանի Հանրապետությունում օբյեկտիվ անհրաժեշտություն է, երաշխիք՝ ապահովելու Մահմանադրության «կենսունակությունը», սահմանադրական սկզբունքների ու նորմերի անմիջական գործողությունը ոչ միայն միջնորդավորված, այլև ուղղակիորեն՝ պատասխանատվության «սեփական զինանոցով»: Այն հակասահմանադրական որոշումներն ու ձեռնարկները, ժողովրդի և պետության շահերին հակասող զարգացումները կանխելու միջոց է: Մահմանադրական պատասխանատվության ինստիտուտը պետք է դառնա ՀՀ-ում սահմանադրական անվտանգության ապահովման համակարգի անբաժանելի մասը: Մահմանադրական անվտանգությունն ապահովվում է, եթե սահմանադրական կարգը կայուն է և զերծ անկանխատեսելի ցնցումներից, եթե պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը համապատասխանում է Մահմանադրությանը: Պետության սահմանադրական անվտանգության պաշտպանության շահը պահանջում է, որ սահմանադրական պատասխանատվությունն իրապես դառնա հանրային իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ տարր: Մահմանադրական պատասխանատվության ինստիտուտն ունի իշխանական լիազորությունների չարաշահումները և վերազանցումները կանխելու ներուժ: Մտանձնելով պետական բարձր պաշտոններ՝ անձինք պետք է կամավոր կրեն ոչ միայն բարոյական, քաղաքական, այլև սահմանադրական պատասխանատվություն: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունն ընդունեց կառավարման պառլամենտական ձևը, ուստի ընդլայնվեցին Ազգային ժողովի սահմանադրական լիազորությունները, և համապատասխանաբար ընդլայնվեցին նրա սահմանադրական պատասխանատվության ոլորտները: ՀՀ Մահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում օրենսդիր իշխանության իրականացման համար¹⁴: Ազգային ժողովը նույն-

¹⁴ Ազգային ժողովի մասին մանրամասն տե՛ս Հ. Հ. **Հակոբյան**, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության մի քանի հիմնախնդիրների շուրջ,

պիսի պատասխանատվություն է կրում նաև կառավարության նկատմամբ իր վերահսկողական լիազորությունների ուժով: Ժողովրդի առջև բարոյական, քաղաքական և սահմանադրական պատասխանատվություն է կրում ոչ միայն խորհրդարանը՝ որպես սահմանադրական իրավահարաբերությունների հավաքական (բազմանձնյա) սուբյեկտ, այլև Ազգային ժողովի մարմինները՝ խորհրդարանի նախագահը, նրա տեղակալները, Ազգային ժողովի խորհուրդը, հանձնաժողովներն ու պատգամավորները¹⁵: Ազգային ժողովը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում առանցքային պաշտոնատար անձանց՝ ՀՀ վարչապետին, ՀՀ նախագահին, Սահմանադրական դատարանի դատավորներին, Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամին, Վճռաբեկ դատարանի նախագահին, գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և անդամներին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին, Հաշվեքննիչ պալատի նախագահին և մյուս անդամներին, Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին ընտրելու համար¹⁶: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ ոչ լիարժեք սահմանադրաիրավական կարգավորումների պատճառով ՀՀ Ազգային ժողովը պաշտոնատար անձանց ընտրության հարցում երբեմն ակնհայտ սուբյեկտիվություն է դրսևորում, սահմանադրական զարգացումները մտնում են փակուղի, և չկա պատասխանատվության որևէ մեխանիզմ ժամանակի, հանրային-պետական ռեսուրսների կորստի, սահմանադրական մարմինների փաստացի անգործության կամ կաթվածահար վիճակի համար: Օրինակ՝ 2018-2019 թվականներին քանիցս արձանագրվեցին փաստեր, երբ Ազգային ժողովը չկարողացավ ՀՀ Սահմանադրական դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի անդամներ ընտրել: Նման իրավիճակները կանխելու և սահմանադրական ճգնաժամից խուսափելու համար առաջարկում ենք հետևյալ լուծումները.

1. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել, որ Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի կամ սահմանադրական այլ մարմնի անդամը շարունակում է իր պաշտոնավարումն այնքան ժամանակ, մինչև Ազգային ժողովը նոր անդամ ընտրի՝ պայմանով, եթե տվյալ անձն ի վիճակի է կատարել իր պարտականությունները: Նման մոտեցում արդեն իսկ դրսևորվել է Հայաստանի Հանրապե-

Եր., 2005, 120 էջ, **նույնի**՝ Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, 708 էջ:

¹⁵ Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվության մասին տե՛ս **Акопян Г. Г., Акопян Р. Х.** Парламент как субъект конституционной ответственности // Конституционное правосудие, Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, Вып. 1 (31), Ер., 2006, էջ 97-114:

¹⁶ Տե՛ս «ՀՀ Սահմանադրություն», Եր., 2015:

տության պետական-սահմանադրական շինարարության գործընթացում: Այսպես, ի տարբերություն 1995 թվականի սահմանադրական իրավակարգավորման, 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով հոդված 55-ի 4-րդ կետում ամրագրվեց դրույթ, ըստ որի՝ «Հանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը»: Նման լուծումը համարում ենք ճիշտ՝ ցանկացած իրավիճակում դատական համակարգի, պետական կառավարման մարմինների անխափան գործունեությունն ապահովելու առումով:

2. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի կամ սահմանադրական այլ մարմնի անդամի ընտրության նպատակով իրավասու սուբյեկտի կողմից Ազգային ժողով է ներկայացվում առնվազն երեք թեկնածու: Այսպիսով կիրականացվի այլընտրանքային ընտրություն՝ մրցակցային կարգով: Նման առաջարկի համար հիմք ենք ընդունել 2015 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ ՀՀ նախագահի ընտրության կարգը: Այսպես, ըստ 125-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը»:

Նշված առաջարկն ընդունելու դեպքում Ազգային ժողովում պաշտոնատար անձանց ընտրության գործընթացում անհարկի «տեղապտույտ» չի արձանագրվի:

Մենք այն կարծիքին ենք, որ թեև Սահմանադրությունը կոչված է ապահովելու սոցիալական-պետական կարևոր արժեքների պաշտպանությունը, այդուամենայնիվ՝ կարիք ունի պաշտպանության երաշխավորված համակարգի, որի գործուն տարրերից է սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը: Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական պատասխանատվությունը պետք է կայանա որպես սահմանադրական իրավանքների իրացման կարևոր ե-

րաշխիք, անհրաժեշտ գործիք՝ երկրում սահմանադրական կայուն իրավակարգի ձևավորման, օրինականության ռեժիմի ապահովման, ժողովրդավարության հաստատման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է թե՛ սահմանադրական պատասխանատվության ատյանների և թե՛ սահմանադրական պատասխանատվություն կրող սուբյեկտների լիազորությունների խոր վերլուծություն, նրանց սահմանադրական պատասխանատվության իրավական, փաստական և դատավարական նորմատիվ հիմքերի հստակեցում, սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման մեխանիզմների կատարելագործում, կազմակերպական ապահովում, պաշտոնատար անձանց իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակի բարձրացում և, մասնավորապես, պատշաճ սահմանադրական իրավակրթության ու սահմանադրական մշակույթի, պետական նոր մտածողության ձևավորում:

Իսկ ինչպե՞ս ապահովել սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կիրառմանն առնչվող հարաբերությունների հստակ իրավակարգավորումները: Այս հարցի վերաբերյալ եղել են տարբեր առաջարկություններ: Որոշ հեղինակների կարծիքով՝ պետք է ընդունել սահմանադրական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ինչպես վարչական իրավախախտումների դեպքում է, որը կնախատեսի սահմանադրական պատասխանատվության միջոցներ¹⁷: Այլոց կարծիքով՝ պետք է ընդունել օրենք, որը կբովանդակի սահմանադրական իրավախախտումների հիմնական կազմերը և դրանց համար կնախատեսի սահմանադրաիրավական սանկցիաներ¹⁸: Մենք գտնում ենք, որ սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում նախ պետք է ունենա սահմանադրական ամրագրում¹⁹: Պետության հիմնական օրենքը պետք է ուղենիշ դառնա հասարակության զարգացման համար, ըստ այդմ՝ խուսափի սահմանադրական ճգնաժամերից ու բախումներից, հաղթահարի հակասությունները, հիմնի նոր ինստիտուտներ, այդ թվում, սահմանադրաիրավական սանկցիաներ ամրագրելուց բացի, պետք է սահմանի սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը՝ որպես Հայաստանի Հանրապետության իրավակարգի պահպանության կարևորագույն երաշխիք:

¹⁷ Տե՛ս **Скифский Р. М.** Ответственность за конституционные правонарушения, Тюмень, 1998, էջ 6:

¹⁸ Տե՛ս **Колосова Н. М.** Конституционная ответственность в Российской Федерации: ответственность органов государственной власти и иных субъектов права за нарушение конституционного законодательства Российской Федерации, М., Городец, 2000, էջ 35, **Авдеенкова М. П., Дмитриев Ю. А.** Конституционное право Российской Федерации. Курс лекций, Ч. 1, էջ 250-251:

¹⁹ Տե՛ս **Акопян Р. Х.** Конституция Республики Армения как нормативная основа позитивной конституционной ответственности государства // Конституционное и муниципальное право, № 24, М., 2007, էջ 10-14:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկվող ինստիտուտի սահմանադրական ամրագրման երկու տարբերակ:

1. ՀՀ Հիմնական օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» դրույթից հետո ավելացնել հետևյալ պարբերությունը. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք սահմանադրական պատասխանատվություն են կրում իրենց լիազորությունների իրականացման համար»:

2. Բացի վերը նշվածից, առաջարկում ենք ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ նախագահին, կառավարությանը, արդարադատության և այլ մարմիններին վերաբերող հոդվածներում նախատեսել, որ նրանք սահմանադրական պատասխանատվություն են կրում իրենց լիազորությունների իրականացման համար: ՀՀ Սահմանադրության հիման վրա սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը պետք է ամրագրվի նաև ՀՀ օրենքներում («Ազգային ժողովի կանոնակարգ», «ՀՀ ընտրական օրենսգիրք», «ՀՀ դատական օրենսգիրք», «Սահմանադրական դատարանի մասին»), սահմանադրական օրենքներում, կառավարության և ՀՀ նախագահի մասին օրենքներում, նորմատիվ իրավական այլ ակտերում:

Միաժամանակ հարկավոր է նախատեսել օրենսդրական երաշխիքներ՝ անհիմն հետապնդումներից պաշտոնատար անձանց պաշտպանելու, ինչպես նաև նրանց օրինական գործունեությունը խոչընդոտելը կանխելու համար:

Մենք բնավ էլ սահմանադրական իրավահարաբերությունների «քրեականացման» կողմնակիցը չենք կամ չենք գտնում, որ քրեաիրավական կամ վարչաիրավական ինստիտուտները կարելի է մեխանիկորեն վերագրել սահմանադրական ոլորտին: Սահմանադրաիրավական սանկցիաները պետք է կիրառվեն Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված անհրաժեշտ ու բավարար հիմքերի առկայության դեպքում, սահմանված սկզբունքներով և կարգով՝ սահմանադրական վարույթի շրջանակում:

Սահմանադրությամբ իշխանական լիազորություններով օժտված մարմինները չպետք է գործեն իրենց ոչնչով չսահմանափակված կամահայեցողությամբ: Նրանց իրավասությունները, ձևավորման ու գործունեության սկզբունքները սահմանված են Սահմանադրությամբ, հետևաբար, նույն կերպ՝ հիմնական օրենքով պետք է նախատեսվեն նաև նրանց սահմանադրական պատասխանատվության հիմքերն ու կարգը: Ժողովրդի կողմից ընտրվելը և պետաիշխանական լիազորություններով օժտվելը անմիջականորեն փոխապայմանավորված են իշխանության աղբյուրի՝ ժողովրդի առջև սահմանադրական պատասխա-

նատվություն կրելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, սուբյեկտի սահմանադրաիրավական լիազորությունների ծավալը և նրա սահմանադրական պատասխանատվության չափը պետք է համարժեք լինեն: Այսպիսով, սահմանադրական իրավունքի գիտության մեջ և Հայաստանի պետաիրավական համակարգում սահմանադրական պատասխանատվությունը պետք է ընկալվի որպես՝

1. իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ,
2. սահմանադրաիրավական հատուկ ինստիտուտ,
3. պետության գլխի, պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, հանրային իշխանության մյուս սուբյեկտների սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ մաս,

4. պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, սահմանադրական իրավահարաբերությունների այլ մասնակիցների պոզիտիվ գործունեություն՝ ուղղված իրենց սահմանադրական իրավունքների ու պարտականությունների կատարմանը (սահմանադրական պատասխանատվության պոզիտիվ ասպեկտ կամ իրացման կամավոր ձև),

5. լիազոր մարմինների (սահմանադրական պատասխանատվության ատյանների) կողմից անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում սահմանադրաիրավական սանկցիաների կիրառում (սահմանադրական պատասխանատվության նեգատիվ ասպեկտ կամ իրացման հարկադրական ձև) սահմանադրական իրավախախտում կատարած սուբյեկտի նկատմամբ,

6. Հայաստանի Հանրապետության սահմանադրական անվտանգության ապահովման, սահմանադրական կարգի պաշտպանության կառուցակարգի կարևոր տարր, պետական իշխանության բաժանման, «զսպումների ու հակակշիռների» մեխանիզմի բաղկացուցիչ մաս, սահմանադրականության ռեժիմի ձևավորման անհրաժեշտ գործոն:

Ժողովրդավարական հասարակությունում ոչ ոք չի կարող վեր լինել Սահմանադրությունից, ուստի ոչ ոք չի կարող ազատ լինել սահմանադրական պատասխանատվությունից:

Մեր երկրում սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը պետք է ստանա ոչ միայն «կյանքի իրավունք», այլև «քաղաքացիության իրավունք»՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության որպես իրավական պետության կայացմանն ու զարգացմանը:

Բանալի բառեր – սահմանադրություն, սահմանադրական պատասխանատվություն, սահմանադրաիրավական կարգավիճակ, սահմանադրական լիազորություն ու պարտականություն, սահմանադրական իրավախախտում, սահմանադրական սանկցիա

РУЗАННА АКОПЯН – Институт конституционной ответственности в Республике Армения. – В статье утверждается, что в государственно-правовой системе Армении конституционная ответственность должна восприниматься как самостоятельный вид юридической ответственности, особый конституционно-правовой институт, компонент конституционно-правового статуса субъектов публичной власти. Кроме того, названный институт – часть системы обеспечения конституционной безопасности страны. Отмечается, что в РА институт конституционной ответственности должен получить не только «право на жизнь», но и «право на гражданство».

Ключевые слова: конституция, конституционная ответственность, конституционно-правовой статус, конституционные полномочия и обязанность, конституционное правонарушение, конституционная санкция

RUZANNA HAKOBYAN – Institute of Constitutional Responsibility in the Republic of Armenia. – The article is dedicated to the institute of constitutional responsibility. It is stated that in the state legal system of Armenia, constitutional responsibility should be perceived within the following perspectives: as an independent type of legal responsibility; a special constitutional legal institution; a constituent part of the constitutional legal status of public authorities; as well as a part of the Republic of Armenia's constitutional security system. It is noted that the institute of constitutional responsibility in the Republic of Armenia should receive not only a "right to life" but also a "right to citizenship".

Key words: constitution, constitutional responsibility, constitutional legal status, constitutional powers and obligation, constitutional violation, constitutional sanction

Ներկայացվել է՝ 13.12. 2019,
Գրախոսվել է՝ 21. 12. 2019,
Շնորհանվել է տպագրության՝ 25.05.2020